

պերը, շինած են այն հոյակերտ կանգուն (ու մգլիթ եղած) կամ նաեւ աւերակ եկեղեցիները: Խնդիր չկայ թէ նաեւ հոս հայ-մահմետական կիրը շատ աւելի պահած է իւր բարբառն ու քրիստոնէական սովորութիւնները:

Հայ-մահմետականը կրօնափոխ եղած է բռնութեան ներքեւ. բայց իւր վիճակն աւելի բարեոքած չէ այսօր քան քրիստոնէիներ: Անշուշտ վերջնոյս կրած այլեւայլ տառապանքներէն զերծ է. բայց այլուստ աւելի եւս անոք ու ստրուկ եղած է յաճախ ինքնակոչ բէկերու ձեռքը: Հոս լազ բէկերն այն դերը կը խաղան՝ ինչ որ քուրդ բէկեր ուրիշ տեղեր, գործակցութեամբ թուրք պաշտօնէութեան: Հիանալի մրգաւէտ երկրիս պարտէզները մեծ մասամբ բէկերու ձեռքն են. եւ գիւղացին ստիպուած է յաճախ անոնցմէ պտուղ գնել, տանելու ի կարին ու վաճառելու, եւ ասով հողաւրու իւր աղքատին տան գոնէ անհրաժեշտ պէտքերը: Կտոր մը հող՝ լերան մը զառիկողին վրայ՝ հազիւ կրնայ հայթայթել իրեն ֆարէհայ մը: Միով բանիւ աղքատ գիւղացի մըն է, չարքաշ եւ կապուած իւր հողին: Փոխադրութեան միջոցներն ընդհանրապէս այս հազիւ անցանելի արահետներուն վրայ միայն ձին ու ջորին են:

* * *

Սեւ ծովէն կարին տեսանք գաւառներու շարք մը, որոնց հնուց ի վեր ապրող միակէ Բնակչութիւնը՝ Հայո-Նի-նը մինչեւ ժԷ դարո-ն կէսերը Բացատապէս քրիստոնէայ էր: Սոյն միջոցին սկսած Բնակչութեան մայր-մը՝ կոտորածներով ալ՝ հսկայ չափեր առած է ժԸ դարո-ն ընթացքին մէջ, շարունակուած նաեւ ժԹ դարուն: Բայց հայ նկարագիրը մնացած է ամէն կողմ, շատ տեղ տակաւին հայ լեզու-ն ալ: Ժայրէ ծայր հայ անո-ններ համշէնէ ու Սեւ-հետէ Սեւ ծովու վրայ՝ մինչեւ Բարբրէ-

Սպեր եւ կիսկիմ-թորթում: Խաղաղ վարչութեան մը տակ, երբ անհետանայ Թուրքի ու մահմետական բռնապետական ճնշումը, մահմետականութիւնն անշուշտ կը մնայ այս բնակչութեան մէջ. բայց հայ լեզուն յանկարծ պիտի լուռի նաեւ այն տեղ, որ լիովին թրքախօս եղած կ'երեւար: Թամեսայն դէպս հայ-մահմետականը բարի դրացի մը պիտի ըլլայ քրիստոնէայ հայուն հետ, ինչպէս է արդէն շատ տեղ:

(Ա.Է.Է.)

Հ. Թ. Տ.



Լ Ե Ջ Ո Ւ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

tam-dam (ԳԵՂՈՓԵՐԵԳԻՐ ՃՅՅԻ “ԸՄՈՒ-ՍԻՆ,”) ԲԵՌԻ ՅԵՐԵԹԵԱՆ ԺԵԳՈՒՄԸ

(Շ-ր-ռ-ն-լ-ը-ն-ի-ն-ը):

Բ.

Բանասիրական տեսակէտից յարեթական լեզուների մէջ “եղբայր”, իմաստի համար այսօր ներկայանում է երկրադաձայն արմատ մը. նոյնն աւելի լաւ պահուած՝ տեսնուում է յարեթական լեզուների “իբիլան” ճիւղում, յարակցութեամբ իգական սեռի -լ ցուցչին, այսպէս է գոնեա “չ, խումբում” “ս, խումբ մմ [+ ?], “չ, խումբ” մմ + լլ|| սօներ. (սպիրանտ շերտ)՝ ց՛ն + ր > զն + ր: Այս բանին (terme, термин) սպիրանտ նկարագիր ցոյց տուող սեմական ընտանիքն ձեռնտու էր այդպիսի վերլուծում տալու. սեմական արմատի նախատիպն է $\sqrt{hw-}$ [$> \sqrt{q\omega-}$], որ երբեմն նաեւ t[ծ] հնչւնով յոգնակի կը կազմէ՝ այն հնչւնով, որ նոյնպէս իգական սեռի ցուցչն է: Սակայն նոյն բանասիրական հայեացքով զննելով՝ երրորդ պաշտօնակատար (fonctionnel) ր հնչւնը սօներէնի մէջ դժուարութիւն պիտի յարուցանէր՝ եթէ նկատուէր այն իբրեւ իգական սեռի ցուցիչ, որովհետեւ լեզուի նկարագրին պիտի պակսէին համապատասխանող պարագայք, եթէ նրան յոգնակու ցուցչի տեղը չդնէինք. եւ *me-gob + ar-al > me-qob + ar-al ձեւը բացատրելի է դառնում իբրեւ կրկին յոգնակի: -al վերջաւորութիւնը (մի եւ նոյն խօսքում -arից ծագող՝ երկրորդ րի հետ պատահած ժամանակ)

ստոյգ է որ յոգնակիի յատկանիշն է: Իսկ թեմայի հետ անբաժին կապուած -ar, անփոփոխ մնացած վանկի մէջ ունինք ոչ ձեւակերտող վերջաւորութիւն, այլ յոգնակուցուցիչ r, ձուլուած $gb(gb) > qb$ արմատի հետ իբր թէ երրորդ արմատական, որ յետոյ զարգացրած ($gbr > qbr$) արմատին հնարաւորութիւն է տուել սօներէնի մէջ բառին (տերմինի) համար պահանջուած ձեւն ընդունել, ինչպէս մեր առաջ հանդիսանում է գրութիւնը՝ նախատիպը վերականգնելիս՝ $qoman > quman^1$ (կը սպասէինք $qselmen$, յատկապէս $qemseln$). նախնական ձայնաւորման մնացորդը (survival) եւ կամ նրա հետքը նշմարուում է me- վերադրին մէջ ($me-qubar$, յատկ. * $me-gobar$), եռահնչուն արմատից, պաշտօնակատար ՚րի յարակցութեամբ՝ $gb + r > qb + r$. ածանցած բուն թեմայի այժմ մեզն ներկայացող ձայնաւորումը «չ»-շերտի աղբման արդիւնքն է սօներէնի մէջ: Եւ յիրաւի սիրիլանտ ճիւղի «չ»-խումբում յոգնակու մէջ երեւցող երրորդ բաղաձայն լը ընկերն է սօներէն ՚րի, նոյն նշանակութեամբ, նրա տեսակ, եւ այն ՚ի մէջ ալ ունինք նշանակութեան համար անհրաժեշտ պահանջուող պաշտօնակատար հնչիւնը, անհրաժեշտօրէն պահանջուող «եղբայր» իմաստը կազմելու համար: Ինդիլին այն է որ «եղբայր» իմաստն այժմ էլ չէ կարելի յիրականութեան ներկայացնել, առանց միւս հաւասար էութեան իմաստի հետ սերտ կապ կազմելու: Իսկ նախապատմականից առաջ տիրող ցեղաստեղծական շրջանում, իսկապէս նախնականում, երբ մինչեւ անգամ եղբայր եւ քոյր չէին զանազանուում իրենց անուններով, եւ «եղբայր» իմաստն ուրիշ տեսակ չէր կարելի ներկայանալ՝ եթէ ոչ յոգնակի ձեւով, յայտնի բան է որ վոց. թեմայ «եղբայր» իմաստի համար (dma , նուազական ձեւ՝ $dam-ia$), որ իր ամբողջութեան մէջ հնչուում էր նոյնպէս, ինչպէս մենք յառաջ վերականգնում էինք, * $dam-a[l]$, իսկապէս պիտի ներկայանար իբր * $damar$ ՝ «չ»-խումբում ՚ի լինելիս երրորդ արմատականի տեղ. յոգնակուցուցիչ ($r||l$) նախնական ձեւի վրայ այս բոլորէիս չենք կանգնի. գուցէ հիմունք կը ստացուի պնդելու, որ նրա նախատիպն ու հնչիւնն էր, սակայն պարզ է երեւում, որ սիրիլանտ ճիւղում (նրա

ձայնաւորման եղանակի ենթարկուած սօներէնի յարակցութեամբ) յառաջ եկաւ «եղբայրներ [+ քոյրեր], հաւաքական իմաստի՝ համար սեպհական բառ մը, միջնորդութեամբ հնչող (sonor) ճիւղի նայ (liquide) խումբի ձեւակերտիչ տառերի, այս ինքն յարեթական սիրիլանտ ճիւղի հնչող ճիւղի հետ խառնուելուց յետոյ: Շուրթ. լեզուն էլ օգտուել է շնչին յանգանութեամբ այս հանգամանքէն, եւ նրա մէջ tam նման մեր բառին պահել է նոյնպէս իրան յատուկ նշանակութիւնը՝ «եղբայր»²: Բայց իրան յատուկ նշանակութեամբ «եղբայր» յատկապէս «եղբայրներ» իմաստն արտայայտող բառն կարող էր միայն եղբայրն էր նշանակել:

Նախնական հասարակական կազմակերպութեան մէջ գոյութիւն ունէր մայրակառնութիւնը (matriarchat) ընդ նմին եւ բաղամայրութիւնը (πολυανδρία), եւ այս կարգը ուժեղացոյն եւ երկարագոյն տեւում էր, իրան մնացորդներով գօնեա, կարելի է ասել՝ տեւում է մինչեւ այսօր յարեթական ազգերի մէջ: Ստրաբոն մատնանիշ է անում սեմական հարաւոր Մինեան ազգի մէջ բազմայրութեան վրայ՝ հետեւեալ խօսքերով (713). «Բոլոր ստացուածքը հասարակաց է. ստացուածքի վրայ լշխան է համարուում երիցագոյնը. նոյնպէս ամէնուն մէկ է կին ամուսինը, որ մատչելի է անխտիր նրան, որ առաջ կը հասնի եւ կը դնէ զրա առաջ այն ձեռափայտը, որը բոլորն էլ կրում են: Գիշերները կինը երիցագոյնի մօտ է: Այսպէս ամէնքը ամէնքի եղբայրներն են, եւ իրանց մօր հետն էլ հաղորդութիւն են ունենում: Ամուսնութեան կարգը խանգարողը համար պատիժն է մահ, իսկ ամուսնութեան կարգի խանգարողը հաղիսանում է այն, որ ուրիշ տոհմից ունի իւր ծագումը»: Ստրաբոնի պատմածը իրականութիւն է եւ իսկական եղելութեան հանգոյն: Այդպիսի գնահատման երաշխաւորն է գուցէ նոյն Ստրաբոնի յառաջ բերած պատմածքն, նոյն Hugo Winckler բնորոշում է բովանդազոր թեման եւ ոճի տեսակէտից իբրեւ «բուն կուսակառ»³: Բայց նոյն կարծիքն նկատմամբ արարական³: Բայց նոյն կարծիքն ունեցող բազմամականներին մէջ գոյութիւն ունեցող բազմայրութեան հաստատում են եւ ուրիշ վկայու-

¹ Հմմտ. գերմ. Geschwister;
² Հմմտ. Delitsch, Sumerisches Glossar, էջ 582;
³ Die Polyandrie bei den Minäern (Altorient. Forschungen, II. Reihe, 1900, Leipzig 1901, էջ 83). «Stoff und Erzählungsweise ist ächt arabisch.»

¹ Հարկաւոր է գիտենալ որ յարեթական լեզունեղանակներն որոշուում են ձայնաւորներով եւ qmn բառերը կը ներկայացնեն:

Թիւններ, որոնք նոյն Wincklerի յօդուածի մէջ յիշատակուում են:

Որ յարեթական ժողովուրդների մէջ մայրականութիւնը նոյնպէս գոյութիւն է ունեցել, ինչպէս առիթ եմ ունեցել ուրիշ տեղ յիշելու¹, վկայում են նոյն Ստրաբոն աշխարհագիրն եւ Ապոլոնիոս. նոցա վկայութիւնները վերաբերում են յարեթական աշխարհի երկու ծայրագոյն կէտերում ապրած ներկայացուցիչներին, Տիբարններին՝ Արեւելքում եւ Բասկերին՝ Արեւմուտքում: Բայց, կրկնում եմ, մայրականութեան մնացորդ հետքերն հանդիպում են մինչեւ մեր ժամանակ եւ Արվիասի յարեթականների մէջ:

Նախնական հասարակական կարգերի տիրող հանգամանքների մէջ «եղբայր» բառն միայն եղբայր չէր նշանակում ներկայ իմաստով, այլ եւ «այր» կամ «ամուսին», նաեւ «հայր» կը նշանակէր: Այս տեսակէտի վրայ է հիմնուած յարեթական ուրիշ մի հաստատութիւն էլ. սեմական ընտանիքի միջավայրում պահուած մի բառ՝ մարդկային ցեղի նախահայր անունն Ադամ, յարեթագէտը ընդունում է իբրեւ յարեթականներից ստացուած ժառանգութիւն, սիրելիանա Ճիւղի որոշ լեզուի սեպհակա-նութիւն, բայց վերադիրի որակութիւնից դատելով՝ սպիրանտ միջավայրի բովը անցած². արդեամբք ալ *dam* նշանակում է եւ հայր, ինչպէս առ հասարակ եւ մարդ, իսկ յատուկ նախնական իմաստով արիւն [$>$ մարմին]: Այսպիսի նախնական նշանակութիւն բացայայտ է դառնում ոչ նրանից, որ սեմական լեզուների մէջ էլ նորա արմատը ասել է «արիւն» (արաբ. *أري*) եւ «կարմիր լինել» (արաբ. *أرى*, իթովպ. *እرى*), այլ այն հանգամանքից, որ «եղբայր» բառն բացատրութիւն է ստանում յարեթագիտութեամբ նախապատմութեան մէջ. «եղբայր» եւ «արիւն» մի եւ նոյն խօսքն է ոչ միայն մեր ժամանակի յարեթական լեզուի մէջ, այսպէս՝ ափսազերէնի մէջ, փոքր տարբերութեամբ՝ -*aya* արիւն եւ -*aya* (հմտ. *ya-aya* եղբայր, *ya-fo-aya* քոյր³), այլ եւ համապատասխան գաղափարի ծագման օրուանից. այսպէս եւ շումիրեան լեզուով «եղբայր» իմաստով բառն նշանակում է եղել նաեւ

«արիւն», ինչպէս յարեթական ստուգաբանութեամբ է պարզուում¹: Մենք այս անգամ կանգ չենք առնում այն հարցի վերայ թէ արդեօք — քանի որ «եղբայրներ» եւ յետոյ «հայր» գաղափարների ծագման համար այսպիսի ցեղագիտական պատմութիւն ունինք իբրեւ ելակէտ, չէ՞ կարող նաեւ «հայր» իմաստն արտայայտող համասեմական բառն նոյն արմատին վերածուել, չնայելով որ նա այժմ՝ կրած ձայնափոխութիւնների պատճառով այդքան անման հնչիւն ունի: Նախալեզուի մեր հոգեբանական ըմբռնումն մեզ ներշնչում է կարծիք, որ գուցէ եւ այս հարցին ստիպուած կը լինինք՝ պատմա-համեմատական հնչիւնաբանութեան օրէնքների վրայ յենուելով պատասխան տալ՝ «այր»²:

Սակայն այս ընդէիս մեզ զբաղեցնում է եղբոր՝ ժամանակի տեսակէտից առաջին դերը նախնական հասարակութեան մէջ, յառաջ քան հոյ դառնալը, եւ նոյն իրական դերի հետ կապուած նոյն լեզուագիտական երեւոյթն, որ «եղբայր» իմաստի մէջ ըստ ինքեան ըմբռնուած էր նաեւ «այր», «ամուսին» գաղափարը: Մինչեւ անգամ «եղբոր» եւ «արիւնի» ծննդական (*génétique*) կապը տեւում էր հոյ դառնող ամուսնոյն միջնորդութեամբ: Եթէ էդհոյր եւ հոյր (առ հասարակ մարդ) աբիւն է, ամուսնութեան գաղափարի հետ աւելի առարկայական կերպով կապուած երեւան էր գալիս աբիւն գաղափարը, եւ իսկ եւ իսկ բնական երեւոյթի, յատկապէս՝ նախնական հասարակութեան նոյն նիւթի մասին կազմած գաղափարի արտայայտութիւնն մենք ունինք նաեւ հիմայ քրէական դարձած «արիւնախառնութիւն» բառին մէջ՝ «Ամուսին» || «այր» բառին վրայ մենք ստիպուած ենք կանգ առնել ամէնից առաջ՝ բոլոր վերեւ առաջարկուած փաստերից եւ մտաբերութեանից անկախ. մենք ստիպուած ենք զբաղուիլ «ամուսին» || «այր» իմաստի վերաբե-

¹ Այն աշխատութեան մէջ, որ տեղ որոշուում էր բացատրուում են յարեթական լեզուագիտութեան միջնորդութեամբ ասորա-բաբելական բառագանձի բոլոր ոչ սեմական խօսքերը:

² «Եղբայր» արտայայտող յարեթական բառին այժմ հնէաբանական (*paléontologique*) բացատրութեան մասին մենք առիթ կ'ունենանք վերադառնալ ուրիշ անգամ, երբ կը զբաղուենք շումիր. ազգակցութիւն արտայայտող *gab-gab*-ը պապ, բառացի հօր հոյր բարդ բառին մէջ գտնուող *gab* [հայր] խօսքին վերլուծութեամբ, այլ եւ *gab* խօսքին, որ նոյնպէս յարեթական ծագում ունի ըստ օրէնքի $p < m$, ի մէջ այլոց նոյն լինելով էական մասում *qes mam-a* [հայր, յատկապէս առնական (*mâle*) խօսքի հետ:

¹ Ифетический Кавказ еւն, էջ 41:
² Սեմագէաներն սկիզբը գրուած էրէֆէ չն նկատում իբրեւ արմատական (*Gesenius, Hwb.*):
³ Ցպագրութեան յանձնուած սուսերէն յօդուածներից մէկում պատճառաբանելով հրատարուում եմ այն նորիմադարձութիւնից, որ արեւ եմ յանգուցեալ ն. ջանախիլի հակառակ, երբ ինձանից առաջ նոյն կարծիքն էր յայտնում:

րող յարեթական նիւթերով, որոնք յարարե-
րութիւն ունին «եղբայր», արտայայտող յարե-
թական $dm + r \parallel dm + l \sqrt{gb} + r$ արմատին
հետ, եւ մի եւ նոյն ժամանակ նրանց տարօրի-
նակ կղզիացմամբ:

«Ամուսին», «այր» իմաստի համար յա-
րեթական ազգերի մի մասն արմատ ունի gmr
($< gmr \parallel gvr > gbr$), որը նոյնացուում էր սեմ.
 gbr ի հետ, բայց այս սեմական արմատը ծանօթ
է ակնարկուած ձեւով միայն եբրայեցերէն եւ
արամեերէն լեզուների մէջ (גבר , ܩܒܪ եւն), իսկ
արարերէնում լոկ [անունից անանցած] $gabara$
ուժեղ, երիտասարդ \parallel մանուկ լինել
բայն գոյութիւն ունի: Նոյն արմատից է նաեւ
վրացերէն gmr հերոս, գիւցազն [$< երի-$
տասարդ, մանուկ \parallel առնական], հսկայ,
իբրեւ վիպասնական ասութիւն տարածուած
նաեւ յարեթական աշխարհից գուրս — լե-
զուով ոչ յարեթազն օսերի մէջ¹: վրացերէ-
նում ունինք նոյն արմատի ուրիշ տեսակներ էլ,
բայց մենք սահմանափակուում ենք այն շրջանի
մէջ, որ կազմուում է ցոյց տրուած տեսակի
խմբից «ամուսին», «այր», գաղափար ներկայաց-
նող բառերով: Սիրիլանտ ճիւղում յարեթա-
կան լեզուների համեմատական քերականու-
թեան տեսակէտից անարատ պահած է բառա-
ձեւը «ս»-խումբը — վրց. $qmar$ «սուսին»²,
«չ»-խումբը — միգր. $qomond$ (միգր., ձան.
 $qomod$) «սուսին»³, միգր. $qomol$ ($qomo$, $qumol$)
[«սուսին»⁴ \parallel այր $>$] + շ, ղի-ցաշ, այրէ մարդ.
սօներէնի մէջ, ուր «այր»⁵ «ամուսին» հնչուում
է $māre$, նախ այնպէս է թուում թէ նոյն ար-
մատի ներկայացուցիչ բնաւ չկայ, բայց այսպէս
միայն ըստ է, որովհետեւ սօներէնում գե-
րակշորէն տիրապետում է բառերու վերա-
դիր ձեւակերտումը. այս ինքն՝ $ma-$ վերադիրով
նոյն արմատ ($gwr > gbr$) առաջին բաղաձայնի
(g [յատկապէս $\tilde{h} > \tilde{g} > \tilde{q}$]) անհետացող սպի-
րանտի⁶ անցմամբ («անկմամբ») եւ երկար \tilde{a} ի
մէջ կիսաձայն wh խորասուզմամբ գոյանում է
 $māre$ ($< *ma-\tilde{h} \parallel \tilde{w}r-e$): Բոլորովին անհաւա-
նական է դառնում այն պարագան, որ սիրի-
լանտ ճիւղում իբրեւ ընտանի երեւան գայ ար-
մատ մը, որ սօներէնի սպիրանտ շերտում այն-
քան խոր է նստած եւ մի եւ նոյն ժամանակ
այնպէս լաւ՝ անաղարտ եւ ամբողջութեամբ

պահուած է: Նոյնպէս շատ կասկածելի է նրա
տարածումը սեմական լեզուների գլխաւորապէս
սպիրանտ խումբի միջավայրում. յարեթական
սիրիլանտ ճիւղին պատկանող արմատի տեսակ-
ներին այնքան մօտիկ ձեւերն չէին կարող երկու
սեմական լեզուների մէջ, որոնցից մէկը (արամե-
րէնը) սպիրանտ խումբից է, միւսը (եբրայեցերէնը)
սիրիլանտից: Այս հանգամանքի պատճառ-բանա-
սիրական գնահատումը մեզ ստիպում է ընդու-
սիրական գնահատումը մեզ ստիպում է ընդու-
սիրական ճիւղի լեզուները «ամուսին»⁷
«այր» իմաստի համար իւրացրել են արմատի
սպիրանտ բնութեան պատկանող տիպարը. այս
տիպարի նախնական տեսակի (* $gmr \parallel gvr$) հան-
դէպ մենք պիտի ունենայինք սիրիլանտ ճիւղի
մէջ բնիկ ձեւերով՝ ըստ «ս»-խումբի՝ * $damar$,
ըստ «չ»-խումբի՝ * $domol$, եթէ հարկ չլինի
աւելի խոր գնալ եւ հետապնդել պաշտօնա-
կատարական ծագում ունեցող երրորդ արմա-
տականը վերականգնել այլ ձեւով:

Մինչեւ այս տեղ ասացածներից գուրս է
գալիս, որ սիրիլանտ ճիւղի մէջ «եղբայր» եւ
«ամուսին», յատկապէս՝ «եղբայրներ» եւ «ա-
մուսիններ» գաղափարների համար միայն մի
բառ կար: Ուրեմն «ս»-խումբի պատկանող ցե-
ղին կամ ազգին լեզուով $damalr$ ($> dam-ra$,
 dma) կարող էր նշանակել եւ նախնական ժա-
մանակներում իսկապէս կը նշանակէր ոչ միայն
«եղբայր», այլ եւ «ամուսին»⁸ «այր (առնա-
կան)»: Հինաւուրց եղելութիւնն այսպէս պար-
զուելուց յետոյ արդեօք էլի կարիք կայ ասելու
«ամուսին» գաղափարագրի հնչողական
արտասանութիւնը $tam > dam$ յարեթական
խօսքն է՝ սիրիլանտ ճիւղի «ս»-խումբից, — այն
խօսքն, որ նախնական շրջանում նշանակում էր
եւ «եղբայրներ» ($>$ «եղբայր») եւ «ամու-
սիններ»⁹ «այրեր», «տղամարդիկ» ($>$ «ամու-
սին», «այր», «տղամարդ»): Շուտով անհայտ
զուս իւր dam «սուսին», $dam-dam$ նորոգուակ կամ
երէրոսորդ «սուսին» բառով ոչինչ չէ աւելցնում
ըստ էութեան¹⁰, իսկ ինչ վերաբերում է բեւե-
ռագիր աւանդութեանը, անոր համաձայն փոխա-
նակ $t > d$ բարդ հնչիւնի (assibilat) պարզի
($t > d$, desibilat) փոխանցուելուն, այս պար-
զացման երեւոյթն եթէ ոչ լոկ հնագրական է

1 Fr. Delitzsch, Sumerisches Glossar, 1914, s. v.
է հարկէ եթէ dam երբեւ $da+am$ zur Seite = seiend
բացատրուի, նշանակում է, որ կամ այս ստուգաբանու-
թեան հեղինակը ըստ արուեստական գաղափար ունի լե-
զուի ծագման եւ զարգացման մասին նախնական հասար-
կութեան մէջ եւ կամ շուտով անհայտ լեզուն հնարուած,
չինձու լեզու պիտի նկատուի:

1 Հմմտ. H. Mapp, *φασκунд*:
2 կամ \tilde{h} ($>$ γ) կամ e ($>$ y) շարքից՝ նայած
բարբառի տեսակին կամ լեզուի խմբին:

(անկատար տառադարձութեան արդիւնք), գոնէ կենդանի լեզուներուն մէջն էլ ըստ յարեթական հնչունարանութեան պատմութեան՝ ներկայանում է օրինակոր, պատահող փաստ, որի մասին ի մէջ այլոց վկայում է նաեւ ճամ-խօսքի վրացերէն *da* (< *dam-*) ձեւը «քոյր» իմաստի համար:

Վիննա, 16 Դեկտ. 1920:

Ն. ՄԱՌ



Մ Ն Տ Ղ Ո Ւ Կ,

«Հանդէս», 1921, էջ 83 մեծ բաւարարութեամբ կարդացի Prof. Dr. F. Kraelitzի յօդուածը ճնշուի բառի մասին: Հեղինակը լիովին իրաւունք ունի պնդելու, ինչ որ նա պնդում է. բառս տաճկերէնում օտարաբան է, բայց հայերէնից թէ ուրիշ լեզուից, այդ արդէն ուրիշ հարց է: Հայ ճնշուի յարեթական ծագում ունի, բնիկ հայերէն բառ է, հայերէնի յարեթական շերտի պատկանող, ուրեմն խօսք չէ կարող լինել նրա տաճկական ծագման մասին: Հայ. բառիս յարեթական ծագման մասին արդէն գրած եմ Яфетические элементы въ языкахъ Арменіи հետազոտութեանս մէջ: Այն տեղ առաջ է բերուած նաեւ վրացերէն *tintraqa* (= ճինճակ), որ գուցէ աւելի հետաքրքրական է տաճկերէն ձեւը լուսարանելու համար. ի հարկէ բառս նշանակում է «Sperling», առ հասարակ փոքրիկ թռչուն, բայց իսկական, կամ աւելի ճիշդ ասած՝ նախնական նրա նշանակութիւնն այն է, ինչ որ է ուսերէնում крапивникъ, այս ինքն Zaunkönig, roitelet, ինչպէս ուսերէնում այս փոքրիկ թռչունի անունն ածանցուած է крапива ելնճ բառից, նոյնպէս եւ վրացերէն *tintraqa* ածանցուած է *qintar* (< *tinfar*) ելնճ բառից: Թէպէտ բառս յարեթական՝ բայց բուն վրացերէն չէ, իւրացուած է յարեթական լեզուների որոշ խմբից. բայց սրա մասին արդէն գրած եմ, կրկնել չ'արժեք:

Պարիս, 13 Մարտ 1921:

Ն. ՄԱՌ



Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ՋԵՆՍ», ԲԵՌԻՆ ՀՈԼՈՂՈՒՄԸ

Բնիկ հայերէն գունաւորուած «Արմաղա» եւ «Որմաղ» բառերուն քով դասական մատենագրութիւնը գործածած է նաեւ զուտ յունական «Ջե-» բառը: Նման յոյն *Zεός* եւ լատին *Iupiter* անուններու՝ «Ջե-»-ն ալ հայերէնի մէջ ենթակայ եղած է անկանոն հոլովման մը, զոր կարելի էր կը համարիմ մատնանշել այստեղ: — «Եթէ այսպէս իցէ, որպէս առաքեալ ասէ, ապա անմահ Ջե-», Ոսկեբ., Մեկն. Պաւլ. Ա, էջ 302 = *ἀθάνατος ὁ Ζεός*, «ուստի վճարիցիմք եւ հաստատիցեմք եթէ չէ Աստուած Ջե-», անդ = *ὅτι οὐχ ἔστι θεός ὁ Ζεός*, «գոհեմիք պատկերի» այսմիկ, որ կոչի Ջե-», Վկայաբ. Գուրիայ եւ Շմոնի (հրաբկ. Գ. Տէր-Մկրտչեան), էջ 66, տող 76: օրինակոր այս ուղղականի կողքին կայ «Դե-» ձեւով ուղղականը մըն ալ. այս անտոյր ձեւը սակայն կը կիրարկուի այն տեղ միայն, ուր Ոսկեբերանի թարգմանիչը կը դադրի յոյն յառաջադիր բնագրին քերականօրէն հետեւելէ, այսինքն՝ երբ յոյնի հայցական ձեւը ենթակայի կը վերածէ՝ այսպէս *τεθνηχέναι τὸν Δία εἰπόντες... τὸν Δία εἰπόντες τετελουτηχέναι* հայցականները հայերէնի կը փոխուին՝ «չմեռաւ Դե-... զե ասն» թէ մեռաւ Դե-», ձեւերով, Ոսկեբ., անդ, էջ 302: Ուղղակի թարգմանչէն են հետեւեալ տողերը «ապա անմահ Ջե-», զոր եւ Դե-ն կոչեն: եւ հայերէն Արմաղա», անդ, էջ 302, որուն դէմ, ինչպէս վերը յառաջ բերի, յոյն ունի միայն *ἀθάνατος ὁ Ζεός*: Յունարէնի եւ լատիներէնի մէջ *Zεός* իւր *Iupiter* ի հայցականները կը զարտուղին իրենց ուղղականէն փոխուելով *Δία* եւ *Iovem*, բայց հայերէնի մէջ, որովհետեւ եզակիի մէջ հայցականն ուղղականէ ոեւէ տարբերութիւն չունի, «Ջե-»-ի կամ «Դե-»-ի հայցականն ալ կը նոյնանայ հետեւաբար ուղղական ձեւին հետ եւ կ'ըլայ «կոչեն զԲառնարա Դե-», Գործք. Առաք. ԺԴ, 11 = *ἐχάλουν τε τὸν Βαρνάβαν Δία*, «զոր եւ Դե-ն կոչեն», Ոսկեբ., անդ, էջ 302, որուն յունարէնը չկայ. «եւ (չ)Ջե-» կուս նոյնվեալ խոստովանեցին», Վկայաբ. Գուրիայ եւ Շմոնի, էջ 64, տող 32: ՀԲ. Ո-ի. ԳԻԳ. տեղիքով հաստուած մը յառաջ կը բերէ, ուր կայ «Դե-» երեւութապէս բնիկ յունական հայցական ձեւը՝ «է շերիմ ինչ ի կրետէ, զոր ասեն նոքա Դե-» զոր հայք Արամաղդ կոչեն» (Ա, էջ 625), այս հաստուածը սակայն՝ ինծի ծանօթ Ոսկեբե-